

Վարուժան Պօղոսեան, *Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Ֆրանսիական Պատմագրութեան Եւ Հասարակական-Քաղաքական Մտքի Գնահատմամբ* (ԺԹ. Դարի Վերջ-Ի. Դարի Սկիզբ), Երկրորդ, բարեփոխուած եւ լրացուած հրատարակութիւն, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 2011, 356 էջ:

Հայոց Յեղասպանութեան արտասահմանեան պատմագրութեան համակողմանի ուսումնասիրութիւնը հայաստանեան պատմագիտութեան կարեւորագոյն խնդիրներից է: Մեր օրերում, երբ Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը կեղծելու եւ դրա պատմական փաստը ժխտելու փորձեր են արուած ոչ միայն Թուրքիայում, այլեւ նմանատիպ երեւոյթներ են արձանագրուած մի շարք արեւմտեան երկրներում, որոնց ակունքներում թուրքերի կողմից վարձուած «պատմաբաններ» են, այս խնդիրը ձեռք է բերում նաեւ քաղաքական բացառիկ կարեւորութիւն եւ այժմեականութիւն, քանի որ միայն պատմական իրականութեան խեղաթիւրման հիմնական ուղիներն ու մեթոդները բացայայտելով է հնարաւոր արժանի հակահարուած տալ պատմութեան կեղծարարներին՝ պաշտպանելով այդպիսով թէ՛ բուն պատմական իրականութիւնը նրանց ոսնձգութիւններից եւ թէ՛ տուեալ երկրների քաղաքացիների՝ ճշմարտութեանը հասու լինելու իրաւունքը:

Երեւանի Պետական Համալսարանի Հայագիտական Հետազոտութիւնների Ինստիտուտի արագ գիտաշխատող, պատմական գիտութիւնների դոկտոր Վարուժան Պօղոսեանի գրախօսուող մենագրութիւնը կարեւոր ներդրում է վերը նշուած խնդրի համակողմանի հետազոտութեան ուղղութեամբ: Այն արդիւնք է երկար տարիների քրտնաջան եւ մանրակրկիտ աշխատանքի, որն աչքի է ընկնում գիտական բժախնդրութեամբ:

Մենագրութիւնը հանրագումարի է բերում Պօղոսեանի վերջին տարիներին հրատարակած մի շարք կարեւոր գիտական հետազոտութիւնները, որոնք լաւ ծանօթ են գիտական հանրութեանը եւ իրաւամբ նպաստել են նրա՝ որպէս փորձառու, իր գործի հմուտ գիտակ պատմաբանի հեղինակութեան կայացմանը:

Գրախօսուող գրքի առաջին հրատարակութիւնը լոյս է տեսել 2005ին¹: Ներկայ՝ երկրորդ, բարեփոխուած եւ լրացուած հրատարակութեան մէջ հեղինակն օգտագործել է մեծ թուով իրեն մինչ այդ անմատչելի նիւթեր եւ իր պարտքն է համարել շնորհակալութիւն յայտնել իր այն գործընկերներին, որոնք իրեն օժանդակել են տարբեր երկրների գրադարաններից դրանք ձեռք բերելու հարցում:

Հեղինակին ոչ միայն յաջողուել է մանրագնին ուսումնասիրելով ֆրանսիական պատմագրութիւնը՝ ներկայացնել նրա տարբեր ներկայացուցիչների հիմնական մօտեցումները Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան հիմնախնդիրների վերաբերեալ, այլեւ բացայայտել ֆրանսիացի մի շարք առաջատար քաղաքական, հասարակական եւ հոգեւոր գործիչների, հռչակաւոր գրողների դիրքորոշումների եւ գնահատականների տարբերութիւնների բուն պատճառները:

Մենագրութեան կարեւոր դրական առանձնաչափութիւններից է Պօղոսեանի կողմից հարցերի քննարկումը տեսական ցեղասպանագիտութեան տեսանկիւնից, ինչը, ցաօք սրտի, հայաստանեան պատմագիտութեան մէջ հազուադէպ երեւոյթ է: Մասնատրապէս, կարեւոր նշանակութիւն ունեն թուրքական իշխանութիւնների որդեգրած՝ Հայոց Յեղասպանութեան քաղաքականութեան սկզբնաւորմանը վերաբերող նրա դատողութիւնները: Միանգամայն համոզիչ են հեղինակի հուսատումներն առ այն, որ այդ քաղաքականութիւնը սկիզբ է առել դեռեւս ԺԹ. դարի 90ականներից: Օգտագործելով բազմաթիւ ցեղասպանագիտական բնոյթի հետազոտութիւններ, նա համոզիչ կերպով հիմնաւորում է վերը նշուած հայեցակարգային թեզը, որը Հայոց Յեղասպանութեան պատմութեան վերաբերեալ գոյութիւն ունեցող բազմալեզու գրականութեան մէջ ունի ինչպէս իր կողմնակիցները, այնպէս եւ հակառակորդները: Նրա փաստարկներն ամրապնդում են իր մօտեցման կողմնակիցների դիրքերը, շարունակելով, այդպիսով, հայաստանեան պատմագրութեան եւ Հայոց Յեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան երախտատուր, սոյն թեմայի ասպարէզում նրա ուսուցիչ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի, սկզբնաւորած ասանդոյթը:

Միանգամայն հիմնաւորուած է եւ կոտ տրամաբանութեան վրայ հիմնուած գրքի կառուցուածքը, ինչը հնարաւորութիւն է ընձեռնում հեղինակին համակողմանի հետազօտել իր իսկ առաջադրած հիմնախնդիրները: Մասնատրապէս, ներածութիւնում Պօղոսեանը նշում է աշխատութեան հիմնական նպատակներն ու ընդգծում իր իսկ բացայայտած գիտական մի շարք կարեւոր նորոյթներ: Վերջիններից անհրաժեշտ ենք համարում առանձնացնել նրա կողմից Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան մէջ Յեղասպանութեան պատմութեան ժխտողական ուղղութեան ակունքների բացայայտումը, որը միանգամայն նոր խօսք է: Մենագրութեան համապատասխան ենթագլուխը, անտարակոյս, կարեւոր ներդրում է Հայոց Յեղասպանութեան փաստը ժխտող «պատմագիտական հետազօտութիւններ»ին արժանի, գիտական բարձր մակարդակով հակահարուած տալու գործում:

Նշենք նաեւ, որ հեղինակն արժանին է մատուցում իր նախորդների՝ Հայոց Յեղասպանութեան պատմութեան ուսումնասիրողների իրականացրած աշխատանքներին, ինչը, մեր կարծիքով, վկայում է ոչ միայն պատմագիտական գրականութեանը հեղինակի իրազեկութեան, այլեւ նրա գիտական բարե-խղճութեան մասին:

Մենագրութեան առաջին գլխում, որը նուիրուած է Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան տպագիր սկզբնաղբիւրներին, Պօղոսեանը մանրամասնօրէն անդրադառնում է Ֆրանսիայի Արտաքին Գործերի Նախարարութեան արխիւի՝ 1890ականներին հայկական կոտորածների վերաբերեալ պաշտօնական վաւերագրերն ամփոփող *Դեղին Գիրքի*² վերլուծութեանը: Դրուատելի է, որ նա յատուկ ուշադրութիւն է դարձնում *Դեղին Գիրք*ում արտացոլուած այն մտքին, որ մահմեդական մոլեռանդութիւնը կարեւոր դերակատարում է ունեցել Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի իրականացման ընթացքում (էջ 34-38):

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը նուիրուած է 1894-1896ի հայկական կոտորածների ընթացքն արտացոլող ֆրանսիական այլ տպագիր սկզբնաղ-

բիրների քննական վերլուծութեանը: Այս առումով մեր ուշադրութիւնը գրաւեց հեղինակի անդրադարձը հայկական կոտորածների պատմութիւնը լուսաբանող՝ Սեբաստիայում Ֆրանսիայի փոխհիւպատոս Մորիս Կարլիէի տիկնոջ՝ Էմիլի Կարլիէի օրագիրը (էջ 50-52): Հարկ է յատուկ նշել, որ տիկին Կարլիէն հայկական կոտորածների այն եզակի ականատեսներից է, որը չի շրջանցել հայերի կրած նիւթական կորուստների հարցը: Ինչ խօսք, Կարլիէի բերած տուեալները կարիք ունեն յետագայ ճշգրտման, ինչը եւ իրաւացիօրէն նշում է հեղինակը (էջ 52):

Մենագրութեան երկրորդ գլուխը՝ «Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Ֆրանսիական Պատմագրութեան Գնահատմամբ» խորագրով, աշխատութեան կարեւորագոյն հատուածն է: Այստեղ հեղինակը յաջորդաբար անդ-րադառնում է հետեւեալ հիմնախնդիրների քննական մեկնաբանութեանը.

ա/ համիդեան կոտորածները 1895-1918ի ֆրանսիական պատմագրութեան լուսաբանմամբ.

բ/ Հայոց Յեղասպանութեան ֆրանսիական պատմագրութեան ժխտողական ուղղութեան սկզբնաւորումը:

Մանրամասնօրէն անդրադառնալով այս հարցերի լուսաբանմանը եւ բազմիցս յղելով ֆրանսիացի հեղինակների՝ գիտական նշանակութեան առումով ոչ-համարժէք աշխատանքները, Պօղոսեանն ուշադրութիւն է դարձնում նաեւ տեսական բնոյթի մի շարք խնդիրների հանդէպ իր մօտեցումների հիմնաւորմանը: Այդ առումով ուշագրաւ են նրա անդրադարձները ֆրանսիական պատմագրութեան այնպիսի կարկառուն ներկայացուցիչների աշխատութիւններին, ինչպիսիք են Ալբէր Վանդալը, Անատոլ Լերուա-Բոլիօն, Բեռնար Կարայ Դը Վօն, ինչպէս նաեւ Ֆրանսիայի արեւելեան քաղաքականութեան խոշորագոյն հետազօտող Էդուարդ Դրիօն:

Այսպէս, օրինակ, հեղինակը նշում է, որ Դրիօն իրադարձութեան եզակի ժամանակակիցներից էր, որը խորապէս ուսումնասիրելով համիդեան վարչակարգի յանցաւոր քաղաքականութիւնը, փաստել է, որ Աբդուլ Համիդ Բ-ը վճռել էր «*Հայկական հարցին լուծուժ տալ հայերին ոչնչացնելու միջոցով*» (էջ 99): Այդպիսով, Պօղոսեանը վերոյիշեալ ֆրանսիացի պատմաբանի հետետութիւնն օգտագործում է Հայոց Յեղասպանութեան քաղաքականութեան սկզբնաւորման վերաբերեալ իր մօտեցումը մէկ անգամ եւս հիմնաւորելու համար:

Միանգամայն ընդունելի է Պօղոսեանի եզրայանգումը, թէ՛ «*Ֆրանսիացի հեղինակների գերակշռող մասը համիդեան կոտորածները մեկնաբանել է իբրեւ պետական քաղաքականութեամբ իրականացուած իրադարձութիւն*», ինչը հեղինակին հնարաւորութիւն է տուել բարձր գնահատելու նրանց ներդրումը Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան գիտական ուսումնասիրութեան ասպարէզում (էջ 171):

Ինչպէս արդէն նշեցինք, աշխատութեան կարեւոր գիտական նորոյթներից է հեղինակի իրականացրած՝ Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան սկզբնաւորման հարցի ուսումնասիրութիւնը: Այս խնդրին լուծում տալու նպատակով Պօղոսեանը քննական վերլուծութեան է ենթարկում այդ տարիներին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Գաբրիել Հանոտոյի, Պ. Բ. Ալոշի, Ռ. Դէ Կուրսոնի, Աբդոն Բուասոնի եւ այլոց աշխատութիւնները:

Պօղոսեանը բացայայտում է նրանց հիմնական թեզերի սնանկութիւնը՝ պատմական Հայաստանի գոյութեան փաստի ժխտման, դարերից ի վեր թուրք եւ այլազգի ժողովուրդների կարծեցեալ խաղաղ գոյակցութեան, 1890ականներին «հայկական ապստամբութեան» վերաբերեալ: Նա գտնում է, որ հայկական կոտորածների պատմութեան փաստը «հերքող» գրականութիւնը երեւան է եկել սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի պատուէրով, համոզմունք յայտնում, որ Դէ Կուրսունի եւ Աբդուլ Բուասունի տպածոները կեանքի են կոչուել 1894ի Սասունի կոտորածների հետաքննութիւնը վարած միջազգային քննիչ յանձնաժողովի՝ 1895ին հրապարակած «Համատեղ Հաղորդագրութեան» հիմնական դրոյթները հերքելու նպատակով: Կարելոր ենք համարում հեղինակի եզրակացութիւնն այն մասին, թէ՛ Հայոց Յեղասպանութեան պատմութեան ժամանակակից թուրք կեղծարարները *«բազմիցս որդեգրել են իրենց Ֆրանսիացի նախորդների հիմնական թեզերը»* (էջ 209):

Մենագրութեան երրորդ գլուխը նուիրած է Հայոց Յեղասպանութեան պատմութեան առաջին փուլի ուսումնասիրութեան ասպարէզում ֆրանսիացի քաղաքական, հասարակական եւ հոգեւոր գործիչների, ինչպէս նաեւ գրողների ներդրման վերլուծութեանը: Առանձին ենթագլխում քննութեան են առնում բանաստեղծ եւ թարգմանիչ, հայ ժողովրդի արդար գործի նուիրեալ Պիէռ Բիառի հայեացքները: Պօղոսեանի վերլուծած փաստացի հարուստ նիւթը միանգամայն հիմնաւորում է նրա իսկ եզրակացութիւնն այն մասին, որ *«Պիէռ Բիառը հայ ժողովրդին սատարած ֆրանսիացի մտաւորականների համաստեղծութեան ամէնափայլուն ներկայացուցիչն է»* (էջ 277):

Կարելոր են նաեւ հեղինակի դիտարկումները ժամանակի ֆրանսիացի քաղաքական, հասարակական եւ հոգեւոր տարբեր գործիչների մօտեցումների վերաբերեալ: Յատկանշական է, որ ցուցաբերելով գիտական պատշաճ մօտեցում, նա չի խուսափում անկողմնակալ դիրքերից գնահատելու ֆրանսիացի այն գործիչների հայեացքները, որոնք բարեացակամօրէն վերաբերուելով հայ ժողովրդին եւ կարեկցելով նրան՝ միաժամանակ չեն կարողացել վեր կանգնել իրենց ժամանակի առանձնայատկութիւններից: Այսպէս, օրինակ, վերլուծելով սոցիալիստական շարժման ականաւոր գործիչ Ժան Ժորէսի հայ-եացքները Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան պատմութեան ա-ռաջին փուլի վերաբերեալ, Պօղոսեանը չի վարանում ընդգծել, որ նրա դիրքո-րոշումը հայ ժողովրդի փրկութեան միջոցների ընտրութեան հարցում *«խիստ չափաւոր էր»* (էջ 227):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերջաբանում տեղ գտած հեղինակի եզրայանգումները տրամաբանօրէն բխում են գրքում ներկայացուած եւ քննութեան առնուած փաստացի նիւթից եւ ձեւակերպուած են ամենայն յստակութեամբ: Մասնաւորապէս, համամիտ ենք Պօղոսեանի հետ այն հարցում, որ ԺԹ՝ դարի վերջի եւ Ի. դարի սկզբի ֆրանսիացի հեղինակների աշխատութիւնները Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան առանձնայատկութիւնների վերաբերեալ ունեն ոչ միայն կարելոր պատմագիտական նշանակութիւն, այլ նաեւ արժէքաւոր սկզբնաղբիւր են այդ բարդ երեւոյթի պատմութեան մի շարք կարելոր իւրայատկութիւնների խորը հետազոտութեան համար եւ այս առումով ունեն գիտական ու քաղաքական անժխտելի նշանակութիւն (էջ 319-321): Չի կարելի չհամաձայնուել նաեւ նրա այն հաստատման հետ, որ քննարկուած ժամանակաշրջանում՝ *«Ֆրանսիացի հեղի-*

նակները, պատմագիտական նշանակութեան առումով ոչ-համարժէք իրենց աշխատութիւններում, պատմութեան կեղծարարների թեզերին անուղղակիօրէն տալիս են հուժկու հակահարուած» (էջ 16): Հեղինակն իրաւացի է նաեւ փաստելով, որ նրանց «բազմազան ելոյթների ամէնազնահատելի կողմերից մէկը, անտարակոյս, հայ ժողովրդի ողբերգութեան մասին հեռաւոր իսկ պատկերացումներ չունեցող եւրոպացի ժամանակակիցներին, երբեմն գուցէեւ դեռեւս ոչ լիարժէք, տեղեկութիւններ հաղորդելն է» (էջ 303):

Հաճելիօրէն նշենք, որ սկզբունքային բնոյթի դիտողութիւններ Պօղոսեանի հիմնարար աշխատութեան վերաբերեալ չունենք: Վստահաբար արձանագրում ենք, որ նրա մենագրութիւնը ծանրակշիռ ներդրում է Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան մէջ, առաջին խօսքը համիդեան կոտորածների ֆրանսիական պատմագրութեան ուսումնասիրութեան բնագաւառում:

ՌՈՒԲԷՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ
safrastyan@policy.hu

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Վարուժան Պօղոսեան, *Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Ֆրանսիական Պատմագրութեան Եւ Հասարակական Մտքի Գնահատմամբ* (ԺԹ. դ. վերջ-Ի. դ. սկիզբ), Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2005:

² *Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman. 1893-1897*, Paris, Imprimerie nationale, 1897; *Documents Diplomatiques. Affaires Arméniennes, (Supplément) 1895-1896*, Paris, Imprimerie Nationale, 1897.